ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>> հուլիսի 2023 թվական N 91-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ-Ի ՀՈՒԼԻՍԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 65-րդ հոդվածով և համայնքի ավագանու կանոնակարգի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Թալին համայնքի ավագանու 2023թ-ի հուլիսի 14-ի արտահերթ նիստի օրակարգը.

1) Թալին համայնքի սեփականություն հանդիսացող գույքը աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

2) ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Թալին քաղաքի Մ.Գորկու փողոցը և Մ.Գորկու փողոցի 1-ին նրբանցքը անվանափոխելու մասին:

3) Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում համայնքի կողմից ծրագրի առաջարկ ներկայացնելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-1	Ձեռնպահ-0
1.Բաբկեն Պողոսյան	1.Ղուկաս Հակոբյան	
2.Արման Կարապետյան		
3.Սարգիս Գրիգորյան		
4.Գեղամ Ղազարյան		
5.Սերգե Մկրտչյան		

6.Ավետիս Մինասյան

7.Հարություն Կարապետյան

8.Նելլի Մարգարյան

9.Գեղամ Սարգսյան

10.Նարեկ Գրիգորյան

11.Կարեն Գրիգորյան

12.Վահե Եղիազարյան

13.Մնացական Մնացականյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ս.ՄԿՐՏՉՅԱՆ

Ք.Թալին
14 հուլիսի 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamayngapetaran@list.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>> հուլիսի 2023 թվական N 92-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով «ՊԻՎԻԷՄ» ՍՊԸ-ի 28.06.2023թ-ի N «23/003-ԳՆ» եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Թալին համայնքի Կաքավաձոր բնակավայրի սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգը (1500 գծ երկարությամբ, 522մմ տրամագծով, 6 մմ պատի հաստությամբ երկաթյա խողովակաշարը) աճուրդ վաճառքով օտարելու և սահմանել մեկնարկային գին 43,360,000 (քառասուներեք միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ (կամ միավոր գծմ արժեքը 28,908 ՀՀ դրամ):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-2	Ձեռնպահ-1
1.Բարկեն Պողոսյան	1.Վահե Եղիազարյան	1.Կարեն Գրիգորյան
2.Արման Կարապետյան	2. Ղուկաս Հակոբյան	
3.Սարգիս Գրիգորյան		
4.Գեղամ Ղազարյան		
5.Սերգե Մկրտչյան		
6.Ավետիս Մինասյան		
7.Հարություն Կարապետյան		
8.Նելլի Մարգարյան		
9.Գեղամ Սարգսյան		

10.Նարեկ Գրիգորյան

11.Մնացական Մնացականյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

Ք.Թալին
14 հուլիսի 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>> հուլիսի 2023 թվական N 93-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱԼԻՆ ՔԱՂԱՔԻ Մ.ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԸ ԵՎ Մ.ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38.1. հոդվածով, հիմք ընդունելով Թալին համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1.Թալին քաղաքի Մ.Գորկու փողոցը և Մ.Գորկու փողոցի 1-ին նրբանցքը անվանափոխել Մկրտիչ Հարությունյանի անվան փողոց և համապատասխանաբար Մկրտիչ Հարությունյանի անվան փողոցի 1-ին նրբանցք:

2.Նախկին Մ.Գորկու փողոցի և Մ.Գորկու փողոցի 1-ին նրբանցքի բնակիչներին ազատել անվանափոխության հետ կապված հասցեի որոշման համար գանձվող տեղական վճարից:

3.Չեղյալ համարել Թալին համայնքի ավագանու 28 հունիսի 2023 թվականի N81-Ա որոշումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Բաբկեն Պողոսյան

2.Արման Կարապետյան

3.Սարգիս Գրիգորյան

4.Գեղամ Ղազարյան

5.Սերգե Մկրտչյան

6.Ավետիս Մինասյան

7.Հարություն Կարապետյան

8.Նելլի Մարգարյան

9.Գեղամ Սարգսյան

10.Նարեկ Գրիգորյան

11.Կարեն Գրիգորյան

12.Վահե Եղիազարյան

13.Մնացական Մնացականյան

14.Ղուկաս Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ Մ.ՄԿՐՏՉՅԱՆ

Ք.Թալին
14 հուլիսի 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>> հուլիսի 2023 թվական N 94-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի առաջարկությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1.Ծրագրին մասնակցելու համար դիմել ՀՏԶՀ-ին՝ համայնքի հետևյալ առաջնահերթ խնդրով՝ համայնքի երեխաների կրթության իրավունքի իրացման և վթարներին արագ արձագանքման նպատակով տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու ծրագրով:

2.Առաջարկի հաստատման դեպքում կատարել առնվազն 20% ներդրում՝ ՏԻԱԲ (Տեղական ինքնակառավարման ապակենտրոնացման բարեփոխումներ) ծրագրի պահանջներին համապատասխան:

3.Ծրագրի իրականացման դեպքում ձեռք բերված միջոցների շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում:

4.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմին պատրաստել և ՀՏԶՀ-ին ներկայացնել համապատասխան առաջարկ՝ ծրագրին մասնակցելու վերաբերյալ:

5.Ձեռք բերված միջոցները չօգտագործել այլ նպատակներով, չօտարել կամ չսեփականաշնորհել ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Բաբկեն Պողոսյան

2.Արման Կարապետյան

3.Սարգիս Գրիգորյան

4.Գեղամ Ղազարյան

5.Սերգե Մկրտչյան

6.Ավետիս Մինասյան

7.Հարություն Կարապետյան

8.Նելլի Մարգարյան

9.Գեղամ Սարգսյան

10.Նարեկ Գրիգորյան

11.Կարեն Գրիգորյան

12.Վահե Եղիազարյան

13.Մնացական Մնացականյան

14.Ղուկաս Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ս.ՄԿՐՏՉՅԱՆ

Ք.Թալին
14 հուլիսի 2023թ.